

«Հայ մամուլ» շտեմարանն համալրվեց Բեյրութի «ՄԱՄԻՍ» շաբաթաթերթի համարներով

Հայաստանի ազգային գրադարանի հյուրերն էին Այնճարի հայ կաթողիկե համայնքի ժողովրդապետ դոկտոր Հ. Մեսրոպ Ծ. Վ. Թովալյանը և Բեյրութի հայ կաթողիկե պատրիարքարանի լրատվամիջոցների գրասենյակի քարտուղար Արամ Գարատաղյանը: Գրադարանի տնօրեն Հրաչյա Սարիբեկյանի հետ հյուրերը քննարկեցին հետագա համագործակցության հարցեր, ձեռք բերվեցին պայմանավորվածություններ:



Մեսրոպ Թովալյանը նշեց, որ Ազգային գրադարանի հետ շատ ծրագրեր ունեն, կարևորում են հայ տպագիր մամուլի թվայնացման գործընթացը և գործով շահագրգիռ աշխարհասփյուռ հայերին կոչ են անում ամեն գնով նպաստել դրա իրականացմանը: Մեսրոպ Թովալյանը Մեսրոպ Հայրունի գրական անվամբ լույս է


ընծայել ավելի քան վեց տասնյակ գիրք, որոնցից շատերն առկա են Ազգային գրադարանի գրապահոցում: Այսօր Մեսրոպ Հայրունի գրադարանին նվիրեց իր վերջին ժամանակներս հրատարակած 12 գրքերը: Արամ Գարատաղյանը նշեց, որ գրադարանին պարբերաբար տրամադրում են Բեյրութում լույս



տեսած «Մասիս» շաբաթաթերթի օրինակները, որպեսզի դրանք թվայնացվեն և հասանելի լինեն ընթերցողին:

Այս անգամ Ազգային գրադարանի մամուլի թվայնացված հավաքածուն համալրվեց «Մասիս» շաբաթաթերթի 1966-68 թվականների ամբողջական համարներով:

Դրանց կարող էք ծանոթանալ Հայաստանի



ազգային գրադարանի կայքի «Հայկական շարունակական հրատարակություններ» համահավաք գրացուցակով՝ <http://www.nla.am/arm/?q=hy/node/3> Շտեմարաններ բաժնի «Հայ մամուլ» շտեմարանում:

